ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2016թ. թիվ 10-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015թ. սեպտեմբերի 11-ի «2016 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» թիվ 58-Ա որոշման՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2016թ. ապրիլի 17-ին նշանակել Լոռու մարզի Սարչապետ, Սարամեջ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի), Սպիտակ, Խնկոյան, Դաշտադեմ համայնքների ղեկավարների հերթական ընտրություններ և այդ համայնքների նորընտիր տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լիազորությունների ստանձնման ժամկետները սահմանել՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝ սույն որոշման մասին ծանուցել համայնքների ներկայիս և նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հունվարի 20
ք.Վանաձոր